Հայաստանի նման հարուստ կենսաբազմազանություն և խոցելի էկոհամակարգեր, փոքր տնտեսություն և զարգացման սահմանափակ ռեսուրսային հնարավորություններ, ինչպես նաև նվազող մարդկային ներուժ ունեցող երկրի համար, կանաչ տնտեսության անցում կատարելը այլևս ոչ թե ցանկություն, այլ անհրաժեշտություն է:

«Կանաչ տնտեսվարման» համակարգին անցում կատարելը մեր երկրին հնարավորություն կտա կյանքի կոչել Փարիզյան համաձայնագրով Հայաստանի ստանձնած ածխածնային չեզոքության հավակնությունները, ինչպես նաև, պահպանել և զարգացնել երկրում առկա հարուստ կենսաբազմազանությունն ու բնական էկոհամակարգերը, ավելացնել բնական միջավայրից ստացվող սոցիալական և տնտեսական օգուտները՝ դրանով հանդերձ ապահովելով սոցիալական համախմբվածություն և բարեկեցություն:

Ծրագիրն իրականացվում է «Բիոսոֆիա» ՀԿ-ի կողմից՝ ՄԱԶԾ ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի ֆինանսական աջակցությամբ:

Նպատակն է՝ աջակցել Հայաստանում կանաչ տնտեսության նպատակային քաղաքականության ձևավորմանն ու ազգային զարգացման ծրագրերում ինտեգրմանը՝ տնտեսության կանաչ փոխակերպման և կենսակայուն զարգացման ոլորտային փորձագետների ներգրավման, հանրային երկխոսության խթանման, շահագրգիռ կողմերի գիտելիքի ու կարողությունների զարգացման միջոցով, հաշվի առնելով ոլորտում առկա տեղական և միջազգային առաջավոր փորձը:

Այն միտված է ցույց տալու, թե ինչպես կանաչ և բնության վրա հիմնված լուծումները կարող են օգնել ամրապնդել երկրի տնտեսության մրցունակությունն ու ճկունությունը՝ միաժամանակ նվազեցնելով ճնշումը բնական էկոհամակարգերի վրա, պակասեցնելով աղտոտվածությունը, խթանելով սոցիալական համախմբվածությունն ու ավելացնելով սոցիալական օգուտները:

«Բիոսոֆիա» առողջապահության, բնապահպանության և գյուղատնտեսության զարգացման կենտրոն» ՀԿ

Հասցե. ՀՀ 3103, ք.Գյումրի, Գ.Նժդեհի 12ա

Կոնտակտային անձ. Գևորգ Պետրոսյան

Հեռախոս. +/ 374 93/ 714 533

Էլ.-փոստ. biosophia@gmail.com

BIOSOPHIA NGO

gef SGP The GEF Small Grants Programme UNDP

«Աջակցություն Հայաստանում կանաչ տնտեսության առաջխաղացմանն ու կառուցողական հանրային երկխոսությանը» ԾՐԱԳԻՐ

ԿԱՆԱՉ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՄՐԻ - 2023

Վերջին տարիների ճգնաժամերը ցույց են տալիս, որ միայն տնտեսական աճի թիրախավորմամբ զարգացման մոդելը խիստ սահմանափակ է և հակասություն մեջ է սոցիալական ու բնապահպանական սկզբունքների հետ:

Այսօր աշխարհի շատ առաջավոր երկրներում տնտեսության զարգացումը միտված է կանաչ և բնության վրա հիմնված լուծումների ներդրմանը, որոնք կարող են օգնել ամրապնդել երկրի տնտեսության մրցունակությունն ու ճկունությունը՝ նվազեցնելով ճնշումը բնական էկոհամակարգերի վրա, պակասեցնելով աղտոտվածությունը, խթանելով սոցիալական համախմբվածությունն ու ավելացնելով սոցիալական օգուտները:

Երկրում տնտեսության կանաչ փոխակերպումը պահանջում է ինչպես քաղաքական կամք և հաստատակամություն, այնպես էլ՝ մեծ փորձագիտական ներուժ ու կարողություններ, շահագրգիռ կողմերի հետ արդյունավետ համագործակցություն, որոշումների կայացման մեխանիզմների փոխհամաձայնեցում և ջանքերի համատեղում:

«Կանաչ տնտեսությունը», տնտեսագիտական համեմատաբար նոր ուղղություն է, որն ընդգծում է շրջակա միջավայրի վրա մարդու տնտեսական գործունեության բացասական ազդեցությունը նվազեցնելու անհրաժեշտությունը և կենտրոնացած է միջավայրի համար նվազագույն ռիսկերով կայուն զարգացում ապահովելու վրա:

«Կանաչ տնտեսությունը» սահմանվում է որպես տնտեսություն, որը բարելավում է մարդկանց բարեկեցությունը և ապահովում սոցիալական արդարությունը՝ միաժամանակ զգալիորեն նվազեցնելով շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները (UNEP, 2011):

Սա տնտեսագիտական նոր մոտեցում է, ըստ որի տնտեսությունը բնական միջավայրից կախված մարդկային գործունեության բաղադրիչ է և կարող է գոյություն ունենալ միմիայն բնական միջավայրի սահմաններում:

Կանաչ տնտեսությունը՝ քիչ ջերմոցային գազեր արտանետող, բնական ռեսուրսներն արդյունավետ օգտագործող և հանրության շահերին ծառայող տնտեսություն է:

Կանաչ տնտեսության հիմքում ընկած է երեք հիմնական սկզբունք.

- անհնարին է անվերջ ընդլայնել ներգործությունը սահմանափակ տարածության մեջ,
- անհնարին է բավարարել անընդհատ աճող պահանջները ռեսուրսների սահմանափակության պայմաններում,
- երկրի վրա ամեն ինչ փոխկապակցված է:

Կանաչ տնտեսությունը մեզ սովորեցնում է.

- ինչպես օգտագործել բնական կապիտալը, այլ ոչ թե՝ ինչպես այն ոչնչացնել,
- տեսնել մեր աղբամանից կամ մեր լվացարանից այն կողմ:

Կանաչ տնտեսության հիմնական նպատակներն են.

- դադարեցնել բնական ռեսուրսների գերօգտագործումը և խթանել էկոտեխնոլոգիաներն ու ցածրածխածնային տնտեսական գործունեությունը,
- խթանել կլիմայի փոփոխության մեղմումն ու հարմարվողականությունը,
- նպաստել էներգաարդյունավետությանը,
- զարգացնել ՎԷԱ տեխնոլոգիաների օգտագործումը,
- ապահովել բոլոր կենսաբանական տեսակների ապրելու իրավունքը և առկա կեսաբազմազանության պահպանությունը,
- ստեղծել կանաչ աշխատատեղեր,
- կրճատել էկոլոգիական հետքը,
- նվազեցնել աղքատությունը,
- բարելավել սոցիալական բարեկեցությունը՝ պահպանելով բնական ռեսուրսները:

Կանաչ տնտեսության կարևոր բնութագրիչներն են.

- բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը,
- բնական կապիտալի պահպանումն ու ավելացումը,
- շրջակա միջավայրի բաղադրիչների աղտոտվածության նվազեցումը,
- ցածր ածխածնային արտանետումները,
- էկոհամակարգային ծառայությունների և կենսաբազմազանության կորստի կանխարգելումը,
- եկամուտների և զբաղվածության աճը: